

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 34

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 03.07.2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամից 24-ը (քսանչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
6. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ- ուսումնական մասի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
9. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
10. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
11. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
13. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
14. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ

15. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
16. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
17. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
18. **Ղազարյան Ջեմմա Կարոյի**— ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ, Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Լրագրություն » 3-րդ կուրսի ուսանողուհի
19. **Խաչատրյան Աննա Արմենի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
20. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
21. **Ավագյան Էլմիրա Սոսի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մեթոդիկա» 3-րդ կուրսի ուսանողուհի
22. **Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
23. **Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռազմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
24. **Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի ձևավորման նպատակով**
պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուների ընտրության մասին

Հաղ.՝ ռեկտորի պարտականություններ կատարող **Ե. Մերոբյան**

2. **«ՇՊՀ» հիմնադրամի ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման կարգի հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն **Ա. Սարգսյան**

3. **«ՇՊՀ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգի հաստատման մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն **Ա. Սարգսյան**

Ռեկտորի պարտականություններ կատարող Ե. Սերոբյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՎԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի ձևավորման նպատակով

պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուների ընտրության մասին

Հաղ.՝ ռեկտորի պարտականություններ կատարող Ե. Սերոբյան

Պարոն Սերոբյանը ներկայացրեց հարցի հետ կապված ՇՊՀ -ի կանոնադրության համապատասխան դրույթները՝ VI կետ 26, 27 ենթակետեր և առաջարկեց պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության առաջադրված 22 թեկնածուներից գիտական խորհուրդի կողմից ընտրել առնվազն 6 անդամի՝ հիմնավորելով դա կանոնադրության համապատասխան կետով, որ պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը (VI կետ 26 ենթակետ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ս. Սարգսյանը, որը չհամաձայնեց պարոն Սերոբյանի կողմից առաջարկված ընտրության նման ձևաչափի հետ և առաջարկեց, որ գիտական խորհրդի անդամները հոգաբարձուների խորհրդի առաջադրված թեկնածուներին ընտրելիս 6 անդամով չսահմանափակվեն, այլ իրենց ցանկությամբ ընտրեն, առանց քանակի որևէ սահմանափակման, այսինքն ընտրությունը կազմակերպել մի քանի փուլերով:

Պարոն Ե. Սերոբյանը նշեց, որ կարելի է և նման ձևով նույնպես կազմակերպել ընտրությունը և ի վերջո գիտական խորհուրդն է որոշում ինչպիսի ձևաչափով այն կազմակերպել՝ ղեկավարվելով կանոնադրության համապատասխան դրույթներով:

Վ. Խաչատրյանը, որը նշեց, որ ֆակուլտետային խորհրդի կողմից արդեն իսկ ներկայացվել են այն քսաներկու անդամության թեկնածուները , որոնք գիտական խորհրդի կողմից պետք է ընտրվեն և համաձայնեց 22 թեկնածուներից միայն 6-ին ընտրելու ձևաչափին:

Պարոն Սերոբյանի կողմից մանրակրկիտ ձևով մեկ անգան ևս կարդացվեցին կանոնադրության համապատասխան կետերը:

Գիտական խորհրդի անդամների կողմից առաջարկվեց հոգաբարձուների խորհրդի առաջադրված 22 թեկնածուներից միայն 6 անդամին ընտրելու ձևաչափը դնել

քվեարկության և ըստ ընտրության առաջին փուլի արդյունքների, այնուհետև իրավիճակային լուծումներ առաջարկել:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ս. Սարգսյանը անդրադարձավ նաև այն հարցի, որ բազմիցս վարչապետն ու ԿԳ նախարարը նշել են, որ բուհերն ու խորհուրդները պետք է ապաքաղաքականացվեն և իրեն հետաքրքրում է, թե ինչպես պետք է խորհուրդն ընտրելիս այն իրականացնել:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ապաքաղաքականացման հետ կապված ինքը չի կարող ասել, թե դա ինչպես են պատրաստվում իրականացնել նախարարությունն ու լիազոր մարմինը, սակայն հոգաբարձուների խորհրդի ընտրության հարցի հետ կապված ժամանակի առունով, ըստ կանոնադրության համապատասխան դրույթների, նշված են սահմանափակումներ և եթե մեր կողմից ժամկետները չպահպանվեն, ապա հոգաբարձուների անդամների ընտրությունը իրականացնելու է արդարադատության նախարարությունը:

Պարոն Սերոբյանը նորից հղում կատարեց կանոնադրության համապատասխան դրույթից՝ այն ընթերցելով:

Առաջարկվեց հաշվիչ հանձնաժողովի կազմը ընտրել 5 հոգուց:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին քվեաթերթիկի ձևն ու փակ գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 5 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Ս Սարգսյան (նախագահ)
2. Ռ. Քալաջյան
3. Վ. Խաչատրյան
4. Ա. Սարգսյան
5. Ք. Հարությունյան

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

Հ.	Թեկնատնի մեծություն, ԱԶԳԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
1	ԱԴԱՄՅԱՆ ՆՈՒՆԵ ՀԵԼԲԵՐՏԻ	4		
2	ԱԹՈՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՐՇԱԿԻ	5		
3	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ	1		
4	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ ԿԱՐՈՒՇԻ	0		
5	ԱՍՈՅԱՆ ԼԻԼԻԹ ԱՆՏՈՆԻ	0		
6	ԲԱՐՍԵՂՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԻԳԱՐԻ	18		
7	ԳԱԼՍՅԱՆ ԳՍՅԱՆԵ ԽԱՎԻԿԻ	0		
8	ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՎԻՐ ԱՐԱՄԻ	3		
9	ԳԱՐԵԳԻՅԱՆ ԱԻՂԱ ՌԱԶՄԻԿԻ	22		
10	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՖԱԲՐԻՑՈՒՍԿՈՒ	2		
11	ԶԱՔԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՀՐԱՆՏԻ	2		
12	ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՂԵՎՈՆԴԻ	2		
13	ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՐԳՍԻ	17		
14	ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ ԳԵՎՈՐԳԻ	22		
15	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԱԶԱՏԻ	2		
16	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՇԻԿ ՊՈՂՈՍԻ	20		
17	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ ՀԱՄԼԵՏԻ	2		
18	ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ ԱԶԱՏԻ	18		
19	ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՖՐԱՆՅԻ	2		
20	ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ	2		
21	ՊԱՊԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԻ	0		
22	ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏՈՒՇ ԿԱՐԱՊԵՏԻ	0		

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ՇՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված և բուհի գիտական խորհրդում ընտրված ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկը՝ հետևյալ կազմով.

1. Գրիգոր Եղիգարի Բարսեղյան՝ ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս,
2. Աիդա Ռազմիկի Գարեգինյան՝ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ,
3. Խաչատուր Սարգսի Իսրայելյան՝ գործարարության և վարչարարության ամբիոնի դասախոս,
4. Արտուշ Գևորգի Խաչատրյան՝ ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
5. Նաշիկ Պողոսի Հարությունյան՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ,
6. Էվելինա Ազատի Մաթևոսյան՝ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ:

II. Միջնորդությամբ հանդես գալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության՝ ՇՊՀ-ի կողմից առաջադրված և ընտրված կազմը ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացնելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ՝

«ՇՊՀ» հիմնադրամի ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման կարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն **Ա. Սարգսյան**

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ օրակարգային 2-րդ և 3-րդ հարցերը 5 օր առաջ էլեկտրոնային նամակի միջոցով ներկայացվել են գիտական խորհրդի անդամներին՝ ծանոթանալու քննարկելու և դիտարկումներ կատարելու համար:

Ա. Սարգսյանը ներկայացրեց կարգը համառոտ կերպով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման» կարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ՝

«ՇՊՀ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման կարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն **Ա. Սարգսյան**

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման և վարկանիշավորման» կարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

24 անդամ. կողմ՝ 24, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **ռեկտորի պարտականություններ կատարող՝**

Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Կ. Պետրոսյան